



Կը բացուէին տասէ աւելի դարպասներ, դռնակներ եւ կամուրջներ:  
Անիի մէջ կառուցուած են հազար եւ մէկ եկեղեցիներ, անոր համար ալ քաղաքը կը կոչուի հազարամէկ եկեղեցիներու քաղաք:

Պատմական Հայաստանի Անի քաղաքը բռնագրաւուած է Թուրքիոյ կողմէ եւ ամայացած է:

**ԱՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐԸ**

Անիի մայր տաճարը միջնադարեան հայ ճարտարապետութեան գլուխ-գործոցներէն մէկն է: Բազրատունեաց ճարտարապետութեան փառքը, Տրդատ ճարտարապետի հանճարեղ ստեղծագործութիւնը:

Տաճարը կառուցուած է 989-1001 թուականներուն, Աշոտեան եւ Սմբատեան պարիսպներուն կեդրոնը, տիրապետող դիրք գրաւելով քաղաքին մէջ:

Մայր տաճարը դրուած է մեծաթիւ աստիճաններ ունեցող պատուանդանի մը վրայ: Ունի երեք շքամուտք՝ հիւսիսային, հարաւային եւ արեւմտեան:

Մայր տաճարը, իր շատ գեղեցիկ կերպարին համապատասխան հարուստ ու մեծաքանակ ոսկեայ եւ արծաթեայ աթոռներ ունեցած է: Գմբէթին վրայ կը բարձրանար մարդու հասակով արծաթեայ խաչ մը, իսկ պատերուն վրայ պահպանուած


արձանագրութիւնները կը վկայեն, որ այդտեղ օծուերէն Շիրակի Բազրատունի արքաներն ու հայրապետները:

Մայր Տաճարը, դէպի վեր սլացող իր տեսքով, Բազրատունեաց տոհմին փառքն ու մեծութիւնը, ինչպէս նաեւ հայկական ստեղծագործ մտքին թռիչքը կը խորհրդանշէ:

**Քաղաքը:**

- 1-Տաճար- պաշտամունքի շէնք, եկեղեցի:
- 2-Պատուանդան- արձանի կամ եկեղեցւոյ բարձր յատակ:
- 3-Շքամուտք- պատուոյ մուտք, գեղեցիկ ու շքեղ մուտք:
- 4-Պարիսպ- բերդի արտաքին պատ:

# ԱՆԻ



Արարատեան աշխարհի Շիրակ գաւառի Ախուրեան եւ Անի գետերուն միախառնումով ձեւաւորուած ցամաքը, հինգերորդ դարէն սկսեալ, կը յիշատակուի Անի անունով:

Անին համաշխարհային քաղաք համարուեցաւ, երբ դարձաւ Բազրատունեաց Հայաստանի մայրաքաղաքը եւ սկսաւ արագօրէն կառուցուիլ: 963-964 թուականին, Աշոտ Գ-ը կառուցեց առաջին քաղաքային պարիսպը, իսկ 25 տարի ետք, Սմբատ Բ-ը կառուցեց երկրորդ պարիսպ մը:

Տասնմէկերորդ դարուն Անին ստացաւ իր վերջնական տեսքը՝ շարունակելով կառուցուիլ մինչեւ տասներեքերորդ դար:

Քաղաքը կը բաղկանար երեք հիմնական մասերէ՝ միջնաբերդ, առետրական շուկայ (հրապարակ) եւ արուարձաններ: Միջնաբերդէն ներս կը գտնուէին արքաներու եւ իշխաններու պալատները՝ շքեղ սիւնազարդ, գորգապատ, որմնակար դահլիճներով, պալատական եկեղեցիներով ու գանձատուներով, զինանոցով եւ արքայական գերեզմանոցով:

Անին Հայաստանի եւ Մերձաւոր Արեւելքի կարեւոր առետրական ճամբաներու խաչմերուկն էր: Քաղաքէն դէպի տարբեր ուղղութիւններ

ԹԻՒՆ ՊԱՏՐԱՍՏԵՆ՝ ՄԱՐՏԻՆԻ ԱՇՈՏԵԱՆԻ ՇՈՒՆԵՆԻՆ  
ՆԿԱՐԱՍԱՐՈՒՆ՝ ՈՒՅՅԻ ԲԵՐԿԵՆԸՆ



**ՁԱԳՈՒԿՆԵՐԱ ԿԸ ԳԾԵՆ**



Կարեն Երեցեան  
2. կարգ  
Ազգ. Միացեալ Նախակրթարան-Յալէպ



Առէն Արամեան  
7. կարգ  
Ազգ. Միացեալ  
Նախակրթարան-Յալէպ



**ԸՆՏՐԷ՝ ԾԻՇԴ ՊԱՏԱՍԽԱՆԸ**

Ո՞րն է արեւին ամենամօտ մուրրակը:

- 1- Փայլածու
- 2- Արուսեակ
- 3- Երկիր

*:Նսփմամփ , դռովոտտու*

Ո՞րն է այն կենդանին, որուն ոսկորը մարմինէն դուրս կը գտնուի:

- 1- Կոկորդիլոս
- 2- Կրիայ
- 3- Կետձուկ

*:Լովմի , դռովոտտու*

**ԾԻԾԱՂ**

Հայրը- Կրկի՞ն ձախողեցար:

Տղան- Այո, ի՞նչ կրնայի ընել, եթէ այս տարուան եւ անցեալ տարուան հարցումները նոյնն էին:

# ԱՂՈՒԵՍՆ ՈՒ ՃՆՃՂՈՒԿԸ ԸՆԿԵՐՈՎԻ ԳՈՐԾ Կ'ԸՆԵՆ



Աղուեսն ու ճնճղուկը կ'ընկերանան: Անոնք կը համաձայնին ցորեն ցանել եւ ուտել: Երբ ցորենը հասնի, անոնք կ'երթան հնձելու: Ճնճղուկը կը սկսի հնձել, իսկ աղուեսը խորամանկութեամբ ծուլութիւն կ'ընէ:

- Սիրելի՛ ճնճղուկ, դուն հնձէ՛, իսկ ես երթամ երկնքի ամպերը բռնեմ, որ վար չիյնան եւ մեր ցորենը չճգմեն,- կ'ըսէ աղուեսը:

Խեղճ ճնճղուկը միս-մինակ կը հնձէ, ամբողջ օրը կը չարչարուի ու նոյնիսկ մէկ վայրկեան չի նստիր հանգստանալու համար: Ի վերջոյ, ան ամբողջ արտը կը հնձէ:

Յաջորդ օր աղուեսը նորէն ծուլութիւն կ'ընէ եւ չ'աշխատիր:

- Սիրելի՛ ճնճղուկ, դուն աշխատէ՛, իսկ ես երթամ երկինքը պահեմ: Տե՛ս ինչպէս ան վար իջած մեր ցորենին կը սպառնայ,- կ'ըսէ աղուեսը ու դարձեալ կ'երթայ եւ կը հանգչի ամբարին մօտ:

Մինչ ճնճղուկը ամբողջ արտը կը հնձէ ու այդ օրուան գործը կ'աւարտի, աղուեսը կը մօտենայ բերքը բաժնելու:

Ճնճղուկը կը հարցնէ.

- Աղուես եղբայր, ինչպէ՞ս բաժնուինք ցորենը մեր միջեւ:

- Ճնճղուկին՝ մէկ կոտ, աղուեսին՝ ինը կոտ,- կ'ըսէ աղուեսը:

Իրապես ալ ինչպէս որ աղուեսը կ'ըսէ, այդպէս ալ կ'ըլլայ: Ճնճղուկին՝ մէկ կոտ, աղուեսին՝ ինը կոտ:

Վերջապէս ճնճղուկը կ'որոշէ աղուեսէն վրեժ լուծել: Ան կը համաձայնի շան հետ, որ յարձակի աղուեսին վրայ: Այսպիսով՝ ճնճղուկը աղուեսին ցորենն ալ իր ցորենին աւելցնելով կը հեռանայ:

Այդ օրուընէ ի վեր ճնճղուկն ու աղուեսը ո՛չ կը տեսնուին, ո՛չ ալ իրար կը հանդիպին:





# ԻՆՉՊԵՐՍ ԱՇԽԱՏԱՍԵՐ Կ'ԸԼԼԱՍ



## 1. Խելացի եղի՛ր:

Աշխատասեր անձը կը հետեւի որոշ սովորութեան մը, որ զինք կը մղէ յաջողեցնելու իր առօրեայ աշխատանքը եւ նպատակը: Սովորաբար կը ձգտի կատարելու այնպիսի աշխատանք, որ կ'իրականացնէ մէկէ աւելի նպատակներ: Ուրեմն՝ խելացի կերպով աշխատիլը աւելի կարեւոր է, քան՝ յոգնութեամբ աշխատիլը: Աշխատասեր անձը տեւական ինքն իրեն պետք է ուղղէ հետեւեալ հարցումը. *«Արդեօք աշխատանքս արժանի՞ (համապատասխան) է տրամադրած ժամանակիս»:*

## 2. Պատասխանատուութիւններ ստանձնե՛ եւ խուսափե՛ զանոնք յետաձգելէ:

Յաջող եւ աշխատասեր անձերը անոնք են, որոնք ժրաջան աշխատանք կը տանին եւ պատրաստ են անկարելին կարելի դարձնելու իրենց նպատակները յաջողութեամբ պսակելու համար: Ուստի, յաջող անձը պետք է ըլլայ ջանասեր եւ պատասխանատուութեան տեր, վերջ տալով ժամանակի վատնումին:

## 3. Դադրե՛ բողոքելէ:

Բողոքելը զգուցուցիչ յատկութիւն է: Բողոքող մարդը տեւական կը գանգատի, եւ ոչինչ կ'ընէ: Ուստի, պետք է խուսափիլ բողոքելէ եւ անոր փոխարէն ձգտիլ մեր բոլոր հարցերուն լուծում գտնելու:

## 4. Դատողութիւն ունեցի՛ր:

Դատողութիւն ունենալն ու մտածելով աշխատիլը կ'օգնեն մեզի, որպէսզի աշխատանքը լաւագոյն ձեւով կատարենք եւ յաջողութեամբ աւարտենք:

## 5. Կեդրոնացում ունեցի՛ր:

Աշխատասեր անձը միշտ կը ձգտի հեռանալու բոլոր այն բաներէն, որոնք կը խանգարեն իր կեդրոնացումը: Բջիջային հեռաձայնը, օրինակ, կը խանգարէ մարդը կեդրոնանալու իր աշխատանքներուն վրայ:

## 6. Դադար տո՛ւր աշխատանքիդ:

Անհրաժեշտ է երկար ժամանակ յոգնեցուցիչ աշխատանքէ ետք, հանգստանալ եւ բաւարար չափով քնանալ: Մարմինը կարիք ունի որոշ հանգիստի, որպէսզի վերականգնէ իր ուժն ու աշխուժութիւնը:

